Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՏԱՇԷՆԻ, ՄԱՐՏՈՒՆԱՇԷՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆԸ

Կոնգրեսականներ Դէյվիդ Դրէյրը (Հանրապետական, Քալիֆորնիա) եւ Մերուին Դիմալլին (Դեմոկրատ, Քալիֆորնիա) հանդէս են եկել մի շարք նախաձեռնութիւններով իբրեւ հակադարձութիւն «Գորբաչովի ժամանակաշրջանի մեծագոյն փլուզումին»։ Նրանք, Ներկայացուցիչների Տան անդամներին փոխանցել են խիստ ոճով գրուած մի նամակ, որի մէջ խստիւ քննադատւում է Գետաշէնի,Մարտունաշէնի գրաւումը խորհրդային զօրքերի կողմից, յայտնում է Հ.Յ.Դ. Միացեալ Նահանգների Հայ Դատի Յանձնախումբը։

Իրենց նամակի մէջ երկու կոնգրեսականները Ներկայացուցիչների Տնից պահանջում են կատարել հետեւեալ հիմնական երեք քայլերը.

Առաջին, Կոնգրէսի կողմից մի նամակ ուղղել նախագահ Գորբաչովին «պահանջելով բռնութիւնների անմիջական դադարեցումը, զգուշացնելով, որ նման դէպքերի շարունակման պարագայում Խորհրդային Միութեանն ուղղուած ամերիկեան օժանդակութիւնները կարող են հարցականի տակ առնուել»։

Երկրորդ, Կոնգրեսի կողմից մի նամակ ուղարկել նախագահ Բուշին, «նրանից պահանջելով, որ դատապարտի բռնութիւնները եւ Գորբաչովի հետ նախատեսուած բարձրաստիճան հանդիպում չունենալ այնքան ժամանակ, մինչեւ որ խորհրդային ուժերը վերջ չդնեն պաշարումին, չհեռանան Հայաստանից եւ չվերացնեն Խորհրդային Միութիւնից անջատուել ուզող այս հանրապետութեան դէմ ցցուած արգելքները։

Երրորդ, «Կոնգրեսի կողմից որդեգրել այնպիսի մի որոշում, ըստ որի Խորհրդային Միութեան ժողովուրդներին տրամադրուելիք ամերիկեան բոլոր օժանդակութիւնները կատարել հանրապետական կառավարութիւնների մակարդակով, այնքան ժամանակ, քանի դեռ խորհրդային զինուած ուժերը բռնարարքներ են գործադրում անկախութեան համար պայքարող հանրապետութիւնների դէմ։

Նշենք, որ Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախմբի նախաձեռնութեամբ արդէն իսկ 9 կոնգրեսականներ իրենց ձայնը բարձրացրել են մարդու իրաւունքների եւ ժողովրդավարական ազատութիւնների այս ոտնահարումների դէմ։ Այդ կոնգրեսականներն են՝ Ֆրանք Անունցիոն (Դեմոկրատ, Իլինոյս), Դէյվիդ Բոնիորը (Դեմոկրատ, Միչիգան), Թոմ Դիլէյը (Հանրապետական, Տեխաս), Դէյվիդ Դրէյրը (Հանրապետական, Քալիֆորնիա), Մերուին Դիմալլին (Դեմոկրատ, Քալիֆորնիա), Ռիչարդ Լեմոնը (Դեմոկրատ, Քալիֆորնիա), Կարլոս Մուրհէդը (Հանրապետական, Քալիֆորնիա),Ֆրանք Փելլէնը (Դեմոկրատ, Նիւ Ջերսի) եւ Դանա Ռոհրաբախերը (Հանրապետական, Քալիֆորնիա)։

ԿԱՆԱԴԱՑԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻ ՆԱՄԱԿԸ

Կանադայի նոր ժողովրդավար (ընկերվար) կուսակցութեան անդամ, պատգամաւոր Սվենդ Ջ. Ռոբինսոնը Մայիսի 2ին դիմել է Կանադայի Արտաքին Գործերի Նախարարին եւ Կանադայում Խորհրդային դեսպանին, արտայայտելով իր մտահոգութիւնը հայկական Գետաշէն եւ Մարտունաշէն գիւղերում Խորհրդային եւ ազերի ուժերի գործողութիւնների հետեւանքով տեղի ունեցած ջարդերի մասին։

Նշուել է, որ հայերի տները այրուած են, գիւղացիներ սպանուած, վիրաւորուած կամ պատանդ են վերցուած։ Ռոբինսոնը պահանջեց Խորհրդային դեսպանին «կուսակցութեան եւ կանադացիների մտահոգութիւնը փոխանցել Խորհրդային Միութեան կենտրոնական իշխանութիւններին, յատկապէս Ներքին Գործերի Նախարարին, որի ուղղակի հրամանատարութեան տակ գործում են Խորհրդային եւ ազերի ուժերը։ Երկխօսութիւնը եւ ոչ թէ բիրտ ուժը պէտք է լուծի Լեռնային Ղարաբաղի հարցը»։

Կանադայի Արտաքին Գործերի Նախարարից Ռոբինսոնը պահանջեց «կանադացիների մտահոգութիւնը արտայայտել բիրտ ուժի այս վերջին գործողութիւնների առիթով»։